

շարքը անոնց որ անդարձ կը մեկնին՝ իրենց ետին քողով հետքերը սրբութեան եւ գիտութեան՝ որ գոյգ քեւերը կը կազմեն Միսիքաբեանին:

Մշակներուն հետ լոյսի կողմն ալ կ'ընդարձակուի նոյն Աբրահոյ հաւատ-
փով եւ ջանքերով. եւ արդէն բարձրացած են նոր պարիսպները, եւ երէկուան
տխուր ամայութեան տեղ՝ նորատունկ ծառերն եւ բուսաբերութիւնը կը կըրկ-
նապատկեն հմայքը եւ կը հեռանկարեն դրախտավայրը վաղուան:

Նոր ընդարձակութեան վրայ – որ Նախախնամութեան մեծ հրաշքն է
Միսիքարի կոխած կողմն փառապատկուած – անշուշտ պիտի չուշանան կանգնիլ
ծրագրուած շէնքերը Հայկական մատենադարաններու եւ քանդաքաններու՝
լաւագոյնս պահպանելու, ցուցադրելու համօրէն աշխարհի եւ օգտագործելու
մանաւանդ նուիրական աւանդները մեր ազգին, մշակութային գանձերը,
վերջապէս մեր հոգեկան – փաղափակքական բոլոր ստեղծագործութիւնները՝
ապրեցնելու համար մեր ցեղը, ներշնչելու համար անոր՝ ի հեմուկս մեր ապա-
գային գոյութեան եւ գործունէութեան սպառնացող դաւի եւ դաւաճանու-
թեան:

Արդարեւ ցորճան կ'ապրի եւ ուժգնօրէն պիտի տենչայ ապրիլ Հայ ազգը,
անոր վրայ պիտի հսկէ Լուսանորոգը, որ իր հոգւոյն ջերմութեամբ հալեցուց
օր մը սառը մեր մահամերձ ցեղին, որ իր հօգը շունչով արծարծեց հուրը
ազգային սրբութեանց եւ վառեց ջահը մեր նոր մամբուն եւ վերելքին: Հայ
աշխարհի վերանորոգող արարչագործութեան գաղտնիքը կայ Միսիքարի փով՝
որու գլխուն վրայ կը նառագայթէ դարերով կուսական «եղիցի»ն, որ կարծես
անմահ՝ իր ազգին անմահութեան համար, անմահ՝ իր յաջորդով, որուն կը
ներկայացնէ հմբագրութիւնս՝ յանուն համօրէն Միսիքաբեան Միաբանութեան
հեռաւոր ու մօտաւոր անդամներուն որդիական ամենաջերմ եւ անկեղծ խըն-
դակցութիւնները բարձր պատուին համար՝ որուն կ'արժանանայ այս երրորդ
անգամ վերընտրութեամբ. ու միանգամայն սրտեռանդն իզձեր եւ մաղթանք-
ներ, որպէսզի առաջիկայ շրջանը՝ գոր իրեն առջեւ Նախախնամութիւնը
կը բանայ, երկնքի լոյսերուն եւ լիացնցուղ շնորհներուն օժանդակութեամբ՝
ըլլայ շրջան մը իսկական վերելքի եւ նորանոր յաղթանակներու Միսիքաբեան
Միաբանութեան գործունէութեան՝ առաքելական, գրական ու դաստիարակ-
չական մարգերուն մէջ, արդարացնելով այսպէս մեր կարօտ ազգին լաւագոյն
լոյսերն ու ակնկալութիւնները:

ԽՄԲ.

ՀԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ

ԻՆՔՆԱԳՒՈՒԽ ԶԵՌՆԱԲՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

(Ուսցչ. Կարիքի մէկ ծանօթութեան առիթով)

Ներկայ «Բագմավէպ»ի զրախօսականի
բաժնին մէջ պիտի ներկայացնենք Ուսցչ.
Կարիքի շատ աշխատասիրուած ու հետա-
քերական մէկ հրատարակութիւնը, այն
է «La Narratio de Rebus Armeniæ» կոչուած
վաւերաթուղթին:

Հոս կ'ուզենք անդրադառնալ նոյն
պատմական վաւերաթուղթին տուած մէկ
տեղեկութեան վրայ, որուն մէջ յարգելի
հեղինակը թուականի սխալ կը գտնէ եւ
կ'առաջարկէ դաշն սրբագրել. մինչ մենք,
այդ վկայութեան մէջ՝ պատմագրին տը-
ւած թուականով անշուշտ՝ կը գտնենք
հաստատութիւնը, անցեալ տարուան Բագ-
մավէպի մէջ մեր յայտնած մէկ կարծի-
քին(1): Ուստի յարմար կը տեսնենք այս
նկատողութիւնը՝ զրախօսականէն դուրս
ընել, որպէսզի քննադատած չըլլանք յար-
գելի հեղինակը, այլ միայն ընդգծած՝ մեր
վաւերաթուղթին հաստատութիւնը ներկայ վա-
ւերաթուղթին վկայութեամբ:

Վերի պատմական վաւերաթուղթը խօ-
սելով Ս. Սահակի մահուան յաջորդող Հայ
Եկեղեցւոյ ներքին վիճակին վրայ՝ կ'ըսէ.
31. «Փոքր Թէոդոսի 37-րդ տարին Հա-
յաստանի եպիսկոպոսներու թիւը նուազե-
լով, անոնք համարձակեցան համաձայնե-
լով, անոնք իրարու մէջ ինքնաբաւութեան եւ
անոնց գլխաւորները եպիսկոպոսներ ձեռ-
նադրեցին: 32. Եւ այսպէս քաջաջոռեցան
ու ցրուեցան կաթողիկէ Եկեղեցւոյ որդի-
ները Պարսիկ թագաւորին կարգադրու-
թեամբ: 33. Իսկ այս ինքնաբաւութիւնը

սկիզբ առաւ Սուրմակի իշխանութեան օ-
րով, մասնաւորապէս իր երկրին եպիսկո-
պոսներուն մէջ»(2):

Ինչպէս յայտնի կը տեսնուի՝ մէջբեր-
ուած վկայութեան մէջ հետեւեալ կարեւոր
տեղեկութիւնները կը տրուին.

ա) Թէ Ս. Սահակի մահէն վերջ, Հայ
եպիսկոպոսներու թիւը նուազած ըլլալով՝
գլխաւոր եպիսկոպոսները կը համաձայնին
ինքնաբաւութիւն կերպով, այն է առանց ու-
նենալու Կեսարիոյ իրաւասութիւնը, ինչ-
պէս նախընթացաբար կ'ընէին, իրենք ի-
րենց նոր եպիսկոպոսներ ձեռնադրել:

բ) Այս դէպքը կը պատահէ Փոքր Թէո-
դոսի 37-րդ տարին, որ կ'իյնայ 444-445
թուականին:

գ) Պատմագրին համար այս դէպքը ցա-
ւալի պարագայ մը կը կազմէ, որովհետեւ
ասով Եկեղեցւոյ միութիւնը պառակտած
ասով եղանակով կ'ըլլայ. քանի որ Հայ Ե-
ւ թագաւորները խղած կ'ըլլան իրենց յա-
պիսկոպոսները ինքնաբաւութեամբ: Իսկ ասոր
բարեբերութիւնը Կեսարիայէն: Իսկ ասոր
պատասխանատուն կը գտնէ ան Պարսիկ
թագաւորը, վասնզի անոր կարգադրու-
թեամբ է որ Հայերը կարող չեն ըլլար
իրենց նախկին յարաբերութիւնը պահել
Կեսարիոյ աթոռին հետ:

դ) Բայց այս վայթակողութեան սկիզբ-
նապատճառը կ'ըլլայ Սուրմակ, որ 428ին՝
Պարսիկ արքային հրամանով կաթողիկո-

2. «La Narratio de Rebus Armeniæ» հրատ. G.
Garitte, Louvain 1952, էջ 30.

1. «Արտաշատի ժողովը եւ անոր մասնակցող եպիս-
կոպոսներ», Բագմավէպ, ՃԹ. (1951), էջ 256-262

պիսկոպոսներ: Այս եղած էր մեր եղբայրացիները. եւ այսօր ներկայ վաւերաթուղթին տուած տեղեկութեամբ կը համարենք թէ ան լիովին կը հաստատուի:

Եղբայրացիները կրնանք ըսել. «Պատմութեան» վկայութիւնը թէ «Թէոդոսի 37րդ տարին, այն է 444/445 թուականին երբ Շահապիվանի ժողովքը տեղի ունեցաւ, Հայերը համարձակած ըլլան համաձայնութեամբ մը նոր եպիսկոպոսներ ձեռնադրելու, իրենց եպիսկոպոսները թիւը նուազած ըլլալուն համար», կը պատշաճի Շահապիվանի ժողովքին թէ՛ թուականով եւ թէ՛ պարագաներով: Հայ եպիսկոպոսներու նուազիւ հասկնալի կը դառնայ Ս. Սահակի մահէն 5-6 տարի վերջ եւ ոչ իր դահադրութեան շրջանին: Հայ եպիսկո-

պոսներու զլիսաւորներուն համաձայնութիւնը ենթադրել կու տայ ժողովք մը որ Սուրբակի օրով եղած ըլլալ է՝ երեւի. բայց ինք կրնար անձամբ ձեռնադրուած ըլլալ ձեռնադրութիւններու՝ առանց կեսաւորի իրաւասութեան, ինչպէս առանց այդ իրաւասութեան ինք ձեռնադրուած պէտք է եղած ըլլայ: Այս պատճառով պատմութիւնը իրեն վերադրած է, բնականաբար, ինքնազուլիս ձեռնադրութեան սկզբնաւորութիւնը:

Ասով կը կարծենք թէ իրարմէ անկախ երկու վկայութիւններ փոխադարձաբար զիրար հաստատած կ'ըլլան եւ հետեւաբար հարկ է՛րլլար «Պատմութեան» յիշած թրականը սրբադրելու:

Հ. Պ. ՀԱՄԷԼԵԱՆ

ԶՄՄԱՌՈՒ ԶԵՌԱԳԻՐ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ԹՈՒԱԿԱՆԸ

Միւթար Գոշի դատաստանագրքի հնագոյն ձեռագիրներու մասին դանաղան անգամներ գրուած է(1): Գեր. Հ. Յովհ. Վրդ. Մըսրեան ուղած է ամփոփել ու յայտնուած կարծիքներու եղբայրացութիւնները ներկայացնել եւրոպացի ուսումնասէրներու ալ մատչելի լեզուով(2): Դատաստանագրքի երեք հնագոյն օրինակներ հասած են մեզի, որոնք կը պահ-

ուին Էջմիածին (թիւ 492), Զմմառ (թիւ 8ա) եւ Ս. Ղազար (թիւ 1237): Էջմիածնի ձեռագրի զբնութեան թուականի մասին տարակոյս չկայ. ունի յիշատակարան, որուն համաձայն ընդօրինակուած է 1295-ին(3): Հարցը կը մնայ որոշելու Զմմառու եւ Վենետիկի օրինակներուն հնութեան առաջնութիւնը:

Մըսրեան Վրդ.ի համաձայն(4), Զմմա-

ռակն է. Հ. Ս. Մատենադրական քննութիւններ (Աղգ. Մատ. ձժԲ.), Վիեննա, 1926, էջ 146-184:

(2) J. Mécérian S. J. - Bulletin Arménologique - Beyrouth 1947-1948 (Mélanges de l'Univ. St. Joseph - tome XXVII, fasc. 10).


(3) Բաւտամեանց Վ. - Անդ, էջ 109:

(4) J. Mécérian S. J. - Անդ. էջ 209-214 [33-38].

(1) Ալիշան. - Յաղագս իսկական եւ նախադադար օրինակի գրոցն դատաստանի Միւթարայ Գոշի: «Բագմավէպ», 1848, էջ 117:


Հացունի Հ. Վ. - Դատաստանագրքի Միւթար Գոշի եւ հնագոյն օրինակները: «Բագմավէպ», 1942, էջ 4:

Բաւտամեանց Վ. - Միւթարայ Գոշի Դատաստանագրքի Հայոց: Վաղարշապատ, 1880 - յառաջարան. էջ 109-116:



1
Դատաստանագրքի Զմմառու
Ա. մաս երես 208ր.

մառու ձեռագրի Բ մասը սկսեալ 256 երեսէն՝ որ կը պարունակէ օրէնք թագաւորացը, տարբեր օրինակով մը դործ է: Այս Բ. մասի վերջաւորութեան կը գտնուի յիշատակարան մը, որ կ'ըսուի թէ այդ ձեռագիրը օրինակուած է Վրթանէս Արքեպիսկոպոսի համար հայոց ՈԶԹ թրւին, այսինքն 1240 թուականին: Յարգելի հայրը ասկէ կը հետեցնէ ձեռագրի առաջին մասին նախ քան այդ թուականը գրուած ըլլալը: Նկատի առնելով Ա. մասին ուսած ըլլալը: Նկատի առնելով Ա. մասին մէջ յիշուած Գրիգոր կաթողիկոսը՝ հաւանաբար Տղան (1173-1194), որուն նրաւուած է ձեռագիրը, կ'երկարացնէ որ թէեւ 1184-էն վերջ գրուած է, բայց հնագոյն ձեռագիր մըն է, հաւանաբար ԺԳ զարու առաջին քառորդին օրինակուած:



2
Դատաստանագրքի Զմմառու
Բ. մաս երես 256ա

Աւելի ուշադիր եւ մանրամասն քննութիւն մը սակայն ցոյց կու տայ որ Զմմառան ձեռագրին մէջ երկու գրիչ գոյութիւն չունի, ամբողջ ձեռագիրը թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ մասով, դործ է միեւնոյն օրինակովի եւ գրուած է նոյն Վրթանէս Արքեպիսկոպոսին համար: Համոզուելու համար գրչութեան արուեստի նոյնութեան, կը բաւէ ակնարկ մը հոս գրուած երկու նմոյշներուն նոյն ձեռագրի Ա. եւ Բ. մասերէն(5):

(5) Հրատարակուած լուսանկարները աղնուօրէն մեզի տրամադրեց Գեր. Հ. Յովհ. Վ. Մըսրեան, Պէյրութի Ս. Յովսէփ համալսարանի հայագիտական ամպլոնի արժանաւոր վարիչը, որուն հրապարակաւ չնորհակալութիւն կը յայտնենք: